

825
2-52

1938

Ո. ՀԵՆՐԻ

ԿԱՐՄՐԱՄՈՅԵՐԻ
ԱՌԱՋՆՈՐԴԵ



82 15
Հ-52

ՊԵՏՐՈՎ

Ո. ՀԵՆՐԻ

15 NOV 2011

8215
2-52

Ար.

ԿԱՐՄՐԱՄՈՐԹՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՐԴԸ

Նկարներ՝ Ֆ. ՊՈԼԵԶՉՈՒԿԻ

Ուսումնական և սուսնիկան

818
18

Տ. Հ. Հ. Հ. Հ.

ԹԵՏՐԱՑ

ՀԼԿՅԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿՈՎԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ

1938

Ա Յ Ն Ի Ւ

(1862—1910)

Հնարելու գարմանալի ձիբք ուներնա: Մի անգամ իր
փռքը իկ աղջկան գրել եր. «Հիշում ես դու ինձ: Յես Մուր-
զիլկան եմ, իմ անունս ե Ալդիրիսոնտի ֆոստի ֆորնի կոֆո-
կուս Յեթե դու յերկնքում աստղ տեսնես և նախքան նրա
մարելը կարողանաս տասնյոթ անգամ կրկնել անունս, դու
կապույտ կովի հենց առաջին հետքի մեջ աղամանդե-
մի մատանի կգտնես: Կովը ձրունի վրա կը ալլի - փոթոր-
կից հետո - իսկ շուրջը պոմիդորի թփերի վրա ալ վարդեր
կծաղկեն: Դե, մաս բարե, ժամանակն ե մեկնելու: Յես
գնում եմ ծղրիդ հեծած»:

Յերեվակայական եյին թե կապույտ կովը և թե
պոմիդորի թփի վրալի ալ վարդերը, բայց ավելի շատ
անքնականն այն պարզ նախադասության մեջ յեղած հե-
տեվյալ բառերն եյին՝ «Ժամանակն ե մեկնելու», վորով-
հետև այդ նամակը Ո. Հենրին գրել ե տաժանակիր բան-
տում յեղած ժամանակ: Իր կյանքի այն մի քանի տարի-
ները, վոր անց եր կացրել նա բանտարկալի շեր-
տավոր հագուստների մեջ, պատճառ յեղան, վոր Ո. Հեն-
րին հոչակավոր գրող գտնալով, այնուհետև ամեն կերպ
թագցնի իր անցյալը: Այն կարճ մականունը, վոր ընտ-
րել եր, պակաս խորհրդավոր չեր թվում, քան քսան-
ութ տառից բաղկացած Մուրզիլիի անունը:



818
39

Միայն Ո. Հենրիի մահից հետո բացվեցին նրա կենսագրության մի քանի մանրամասնությունները: Ո. Հենրիի իսկական անունը Վիլյամ Պորտեր եր: Նա ծնվել է Ամերիկայի մի խուլ քաղաքում, բժշկի աղքատ ընտանիքում: Նրա հայրը տարված եր ինչպոր ֆանտաստիկ մեքենաների ապարդում գյուտարարությամբ: Հեռավոր ճանապարհորդությունների և նշանավոր արկածների լեռազանքը դեռ փոքր հասակից գերել եր Վիլյամին: Տաս տարեկան հասակում կետորսությանը նվիրվելու հաստատուն վճռով նա տնից փախավ: Նրան վերադրին: Յեվ շուտով Վիլյամը ստիպված պիտի դնար մարդկանց մեջ մտներ, վոր սովորական արհեստով իր համար հաց ճարեր:

Սկսվեց ծանր պայլքարի ժամանակն ապրուստի համար: Իր ժամանակակից Զեկ Լինդոնի նման Պորտերը փորձեց ամեն տեսակ արհեստներ: Ազգում դեղատանն եր աշխատում իբրև աշակերտ. ավելի ուշ, ֆերմայում վորպես կովբույս*): Եր աշխատում, զրասենակումն եր ծառայում, գծադրիչ եր, դերասան, լրագրավաճառ, բանկային գանձապահ: Վերջին պաշտոնը ճակատագրական դարձավ Պորտերի համար: Բանկում զեղծարարություն բացվեց և այդ բանի մեջ անհիմն կերպով մեղադրեցին Պորտերին: Նա փախավ Հարավային Ամերիկա: Յերկար ժամանակ թափառական կանք եր վարում այնտեղ. լեղավ Արգենտինայում և Պերույում, Գոնդուրասում և Մեքսիկայում, բայց կնոջ հիվանդության լուրը լսելով, վերադրձավ հայրենիք: Նրան տաժանակիր բանտարկության դատապարտեցին — հինգ տարի անտանելի զրկանքների և անորինակ անարդանքների: «Այստեղ թոքախտն ու ինքնասպանությունը նույնպես հաճախակի լեն, ինչպես հարբուխն ու պիկնիկը ձեզ մոտ, աղատության մեջ», գրում եր Պորտերը բանտից: Այստեղ փաթաթաթղթի կտորտանքի վրա գրեց իր առաջին

պատմվածքը: Այդ պատմվածքը չտպեցին, սակայն քառասուն տարեկան Պորտերը դուրս յեկավ բանտից, հաստատ համոզված լինելով, վոր իր միակ կոչումը գրականությունն եւ: Իր կյանքի մնացած վոչ լրիվ տաս տարվա ընթացքում Ո. Հենրին գրեց յերեք հարյուր նորավեպ — կարճ ու գրավիչ պատմվածքներ: Ամեն մի պատմվածքի մեջ նա դնում եր իր արտասովոր ու ծանր կյանքի ընթացքում կուտակված բազմակողմանի գիտելիքների մի փոքր մասը:


Մի գրող, վոր գիտեր դեղահատեր փաթաթել և լասող*) նետել, լրագրեր հարթել, թամքի վրա նստած հրացան արձակել. մի մարդ, վորն Ամերիկայի մայր ցամաքի ամենահեռավոր անկյուններն եր թափառել և ուշադրությամբ դիտել կյանքը գավառական քաղաքներում և ֆերմաներում, նավահանգստներում և պլանտացիաներում, տափաստաններում և մայրաքաղաքներում, ակումբներում և բանտերում, — նա նոր հերոսներ տվեց գրականությանը, և պատմեց նրանց մասին նոր լեզվով՝ հակիրճ, արտահայտիչ, սուր ու ծաղրող:

«Ամբողջ կյանքն ինձ ե պատկանում: Յես քաղում եմ նրանից այն, ինչ ուզում եմ և կիրագործեմ այնպես, ինչպես կարողանում եմ», այսպես եր գրում Ո. Հենրին իր գրքերից մեկում: Յեվ այդ նա կատարում եր այն արվեստով, վորը թափառական, պատահական արվեստների տեր մարդուն Ամերիկայի առաջին նորավեպ գրողի տեղը նվաճեց:

Ա. ՌՈՒՍԿԻՆ

*) Կովբույս — ձիավոր հովիկ:

*) Լուսող — ողափարան:



ԿԱՐՄՐԱՄՈՐԹՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՐԴԸ

Այդ կարծես նման եր մի շահավետ գործի... Սակայն, համբերեցեք—թողեք խոսքս վերջացնեմ:

— Մենք գտնվում ենք այնտեղ, հարավում, Ալաբամայում, լեռք մանկագողության այդ գաղափարը նտավ մեր վլուխը: Այդ պատահեց, ինչպես Բիլլ Դրիսկոլը եր հետազայում արտահայտվում, այն մոմենտին, լեռը մեր միտքը ժամանակավորապես պղառվեց: Սակայն այդ բանը հետո միայն պարզվեց:

Այդպես ուրեմն, այնտեղ մի փոքրիկ քաղաք կար, առափակ, ինչպես մի բլիթ, և փորը կոչվում եր, իհարկե, վոչ ալլ կերպ, բայց լեթե Մեմմիտ*):

Յես և Բիլլը միասին ունեինք մոտ վեց հարյուր դոլար, իսկ մեզ անհրաժեշտ եր ունենալ ելի մի լերկու հաղար, փոր մի խարդախ գործ սկսելինք Արևմտան իլինուսում: Այդ գործը մենք լավ կշռադատեցինք՝ նստած հյուրանոցի սանդղավանդի վրա: Այդպիսի կիսաքաղաք-կիսագյուղերում սերը դեպի իրենց զավակները հավանուին առանձնապես ուժեղ պիտի լինի, դատում ելինք մենք: Ահա թե ինչու, և ելի ալլ պատճառներով, ման-

կագողության նախագիծը իրագործելն այսուեղ հազար անգամ ավելի խելքի մոտ բան եր, քան այն սահմաններում, ուր հասնում են թերթերը, վորոնք անմիջապես պատահարի վայրն են ուղարկում քաղաքացիական հագուստով իրենց լրահավաքներին: Իսկ Մեմմիտը, մենք գիտելինք, վոր վոչ մի ալլ սարսափելի բան չի կարող ուղարկել մեր գեմ, բայց յեթե մի զույգ կոնստերլներ*): և զուցե ելի մի քանի անպետք խուզարկու շուն և մի զույգ հայիուական հողված «ֆերմերական շաբաթաթերթի» մեջ: Մի խոսքով, ըստ յերևուցին, ամեն ինչ բարեհաջող եր դասավորվում:

Իբրև զո՞ւ մեզ համար նշել եյինք հայտնի քաղաքացի վոմն Եբենեզեր Դորսետի միակ վորդուն: Հայրն այդ քաղաքի պատվավոր վաշխառու սարդն եր և սկզբունքով հակառակ եր ամեն տեսակ հանգանակությունների և նվիրատվությունների:

Տղան տաս տարեկան եր: Նրա գեմքի վրա պեպեններից փոսեր ելին յերեվում, իսկ մագերի գույնը նման եր այն ամսագրի շապիկին, վոր գնում եք կայարանի կիոսկի սոտով անցնելիս, յերբ շտապում եք թոշել գնացքը:

Մենք Բիլլի հետ փորոշեցինք, վոր Եբենեզերը ջարդ ու փշուր կլինի, բայց ստիլված յերկու հաղար դոլար մինչև վերջին կոպեկը կհաշվի իր վորդու համար: Սակայն, համբերեցեք, թողեք մինչև վերջը պատմեմ:

Այդ քաղաքից յերկու մղոն հեռավորության վրա յեղենմասու թփուտով ծածկված մի սար կար: Այդ սարի մեջ հակառակ կողմից մի քարայր կար: Ահա այդ քարայրի մեջ մենք մթերքի պաշար պատրաստեցինք:

Մի գեղեցիկ զիշեր Եբենեզեր Դորսետի տան մոտ կանգնեցրինք մեր միաձի կառքը: Տղան փողոցում թա-

*) Կոնստերլ—վոստիկան:

*) Մեմմիտ—գտպաթ, բարձունք,

փառում եր և քարեր նետում դիմացի ցանկապատին
նստած կատվի վրա:

— Ե՞յ, փոքրիկ,—ասաց Բիլլը,—կուզե՞ս կառքով
զբունել և մի տոպրակ սառնաշաքար ստանալ:

Տղան քիչ եր մնում Բիլլի աչքին նետեր աղյուսի կտորը:
— Ալդ մի հինգ հարյուր գոլլարով ագել կնստի ծերու-
կին,—ասաց Բիլլը և կառքից դուրս լեկավ:

Տղան թպրտում եր ինչպես մի թագլյա առջուկ:
Հազիվ մեզ հաջողվեց գցել նրան կառքի հատակին և
մենք քշեցինք: Տղային տարանք քարալը, իսկ ձին լեղեվ-
նու թփուտի մեջ կապեցինք: Կառքը յես վերադարձրի
յերեք մղոնի վրա դանվող հարևան զյուղը, վորտեղ մենք
վարձել ելինք այն, և այնտեղից վոտքով վերադարձա:

Բիլլը սպեղանու կտորներ եր կպցնում իր մարմինի
ճանկը ու կապտած տեղերին: Քարայրի մուտքը փա-
կող մեծ քարի հետեր խարույկ եր վառվում: Տղան,
մորաճուռակի*) պոչից պոկած յերկու փետուր
ցցած իր շիկակարմիր գանգուրների մեջ, հետեւում եր
խարուկի վրա կախված թերամանին: Յերբ յես մոտեցա,
նա ցույց տվեց իր կողքին զրած մահակը և ասաց.

— Անիծքած սպիտակամորթ: Ինչպես ես համար-
ձակվում մոտենալ հովիտների սարսափ կարմրամորթների
առաջնորդի խարույկին:

— Վերջապես հանդարտվեց,—ասաց Բիլլը և վոլորե-
լով վարտիքը նալում եր իր վոտքերի վրա գոյացած ար-
յան լճացումներին:—Մենք հնդկացիներ ելինք խաղում:
Յես ծեր գաղանորսն եմ և գերի յեմ ընկել կարմրամորթ-
ների առաջնորդի մոտ: Լուսաբացին գանգամաշկս
պիտի քերթեն: Սատանան տանի: Այս տղան կարգին ա-
քացի յե խփում: Այս, սեր, տղան իրեն շատ լավ ե ըդ-
գում, կարծես թե լուղ ու մեղքի մեջ ե լվլվում: Այնքան

*) Մորաճուռակ—բաղեցի նման մի թոչուն:

հետաքըքիր եր նրա համար քարալրում խարույկի մոռ
գիշերելը, վոր բոլորովին մոռացավ, թե ինքը գերի յեւ
Անմիջապես անուն հնարեց ինձ համար—Ոձի Աչք, լրտես
հայտարարեց ինձ և դատապարտեց մահվան՝ խարույկի
գանդաղ կըակի վրա խորովելով: Մահապատիժը պիտի
կատարվեր լուսաբացին, յերբ արշավից կվերադառնալին
նրա քաջարի մարտիկները:

Մենք նստեցինք ընթրելու: Տղան հացով ու ապուխ-
տով լցրեց բերանը և սկսեց խոսել: Նա մի յերկար ճառ
արտասանեց, մոտավորապես այսպիսին:

— Այս լավ բան ե: Յես դեռ յերբեք խարույկի մոռ
չեմ գիշերել: Բայց յես առաջ մի ձեռնասուն պառկամուկ
ունեցի—ոհ, վնրքան ծիծաղելի յեր նա: Յես տաս տարե-
կան եմ գառնում: Տանել չեմ կարողանում դպրոց հաճա-
խելը: Մկները կերան Զիմմի Տալբոտի չալ հավի տասնվեց
ձուն: Այստեղ անտառում իսկական հնդկացիներ լինում
են: Ելի ապօւխտ տվեք ինձ: Ճիշտ ե, վոր քամին ծառերի
շարժումից ե առաջանում: Մենք հինգ հատ շուն ունեյինք:
Գաղաննրս, քիթդ ինչու այդքան կարմիր ե: Հայրիկս մի
կույտ գրամ ունի... Աստղերը տաք են: Յես նրան շաբաթ
որը մի լավ ծեծեցի, Եղ Ուոկերին: Չեմ սիրում աղջիկնե-
րին... Դոգոյները պետք ե պարանով փորսալ. ձեռքերով
չի կարելի: Յեղներն ել են բառանչում: Վո՞չ: Ինչու նա-
բինը կլոր ե: Այստեղ քարայրում գուք մահճականեր
ունեք: Ամոս Մուրեյին վեց մատ ունի. ճիշտ եմ ասում...
Թութակը խոսել գիտե, իսկ կապիկը կամ ձուկը չգիտեն...
Ուգեմն, քանի միավոր կա դյուժինի մեջ:

Ամեն մի հինգ ըսպեյից հետո նա հիշում եր, վոր
ինքն արլունարբու հնդկացի յե, վերցնում եր իր փայտը,
վոր հրացան եր պատկերացնում, և մատների ծայրերի վրա
քարայրի մուտքի կողմն եր ուղեգորվում, վոր հսկի, ար-
պաք չեն գալիս ատելի սպիտակամորթների հետախույզ-

Ները։ Ժամանակ առ ժամանակ նա մարտական ճիշ եր արձակում, վորից ծեր Գաղանորսը ցնցվում եր։

Հենց սկզբից տղան խուճապի մեջ եր գցել Բիլին։
— Կարմրամորթների առաջնորդ, — ասացի, — կուզեւ տուն վերադառնալ։

— Ինչու համար, — պատասխանեց տղան, — տանը տը-խուր եւ Զեմ սիրում դպրոց գնալ։ Այսպես ավելի ուրախ եւ — խարույկի մոտ գիշերելլը։ Ուժի Աչք, դու ուզում ես ինձ տնուն տանելու Ե՛, հարկավոր չեւ։

— Լավ, — ասացի, — մենք կմնանք դեռ այստեղ, քարայ-րում։

— Ո՞ս, այդ հրաշալի յեւ, — ասում եւ տղան։ Սքանչե-լի յեւ։ Կյանքումս դեռ այսպես չեմ ուրախացել։

Ժամը տասնմեկին մոտ պառկեցինք քնելու։ Մի քանի վերմակ փոեցինք և կարմրամորթների առաջնոր-դին մեր մեջտեղը պառկեցը ինք։

Մենք չեյինք վախենում, թե նա կիսախչի։ Ուզիդ յե-րեք ժամ չթողեց մեզ վոր քնենք։ Ամեն քառորդ ժամը մեկ նա վեր եր թոշում, վերցնում եր հրացանը և ճշում իմ կամ Բիլի ականջին։ «Ա-ս-ս, ընկեր»։ Հենց վոր մի տեղ ճյուղը ճթթար, կամ տերեւ խշար, — նա վեր եր թոշում։ Վերջը յես քնեցի, բայց անհանդիստ քնով, և յերազում տեսա, իբր թե մի շիկակարմիր ավազակ փախ-ցրել ե ինձ և շղթալով ծառից կապել։

Լուսաբացին Բիլի սոսկալի ճշոցից յես արթնացա-
Դա ճյոց չեր, և վոչ ել բացականչություն, կամ աղազակ,
կամ վունց, կամ մի նման բան, վոր փոքը ի շատ ե
վայել լիներ տղամարդու ձայնաթելերին, Դա մի անպար-
կեցա, խուճապային և ստորացուցիչ ճշոց եր մի կնոջ՝
վոր տեսիլք եր տեսել կամ հագարունանի։ Սոսկալի բան

։ Լուսաբացին, քարայրում լսել առողջ, կատաղի և ուժեղ մի մարդու կանացի ճշոցը։

Վեր թառ, վոր տեսնեմ, թե ինչ ե պատահել։ Կար-
մրամորթների առաջնորդը Բիլին հեծած, մի ձեռքը խրել
եր նրա գանգուրների մեջ, մյուսով սուր գանակ ըռնած.
այն դանակը, վորով մենք ապուխտն եյինք կտրտում։
Տղան նախորդ որը հայտարարած դատավճռի համաձայն,
պատրաստվում եր Բիլի գանգամաշկը պոկել։

Դանակը խլեցի նրա ձեռքից և նորից պառկեցրի։
Բայց այդ ըսպեյից արդեն Բիլի հավասարակշռությունը
խանգարվեց։ Նա պառկած եր իր տեղում, բայց քանի գեռ
տղան մեր լերկուսի մեջտեղումն եր պառկած, Բիլը աչք
չեր փակում։ Յես մի քիչ ննջեցի։

Լուսաբացին մոտ հանկարծ հիշեցի, վոր կարմրամորթ-
ների առաջնորդն ինձ մեղմ կրակի վրա այրման եր դա-
տապարտել և վոր մահապատիժը պիտի լուսաբացին կա-
տարվեր։ Յես չեյի զղայնանում և վոչ ել վախենում եյի,
ատկայն վեր կացա ծխամորճս կպցը և պատին հենվեցի։

— Ինչու այդքան շուտ ես վեր կացել, Սեմ, — հարց-
րեց ինձ Բիլը։

— Զգիտեմ իսկապես, — ասացի։ — Թիկունքս ինչ վոր
ցավում եւ Կարծում եմ, վոր ավելի թեթև ինձ կզգամ,
յեթե հատած մնամ։

— Ստում ես, — ասաց Բիլը։ — Դու վախենում ես:
Խարույկի վրա այրվելուն ես դատապարտված և վախե-
նում ես, թե տղան իրագործելու յեւ իր դատավճիռը Յեվ
նա կաներ այդ, յեթե միայն հաջողվեր նրան լուցկի գտնել։
Ի՞նչ սարսափելի բան ե, Սեմ։ Միթե վորեւ մեկը կհամա-
ձայնվի դրամ վճարել, վոր հետ տան նրան այս սատա-
նային։

— Պարզ բան ե, — ասացի։ — սրա նման տղան ամենա-
տիրավինն ելլինում սիրուց դողացող ծնողների համար։ Դե,

ապա մի վեր կացեք առաջնորդի հետ միասին և նախաճաշով զբաղվեցեք, իսկ յես վերև կբարձրանամ։ Այնուամենայնիվ անհրաժեշտ ե տեղազննություն կատարել։

Բարձրացա մեր փոքր սարի գագաթը, շրջակայքը դիտեցի։ Յես սպասում եյի, թե կտեսնեմ Սեմմիտի կողմից դուրս յեկած մանգաղներով ու յեղաններով զինված հաղթանդամ գլուղացիների մի խումբ, վորը պիտի վորոներ ստոր մանկագողերին։ Սակայն, խաղաղ տեսարան բացվեց առաջս։ և այդ անմարդավայր շրջապատի վրա կետի նման սեվին եր տալիս մի մարդ, վոր քայլում եր մուդ շագանակագույն ջորի լծած գութանի հետեւից։ Գետում վոչ վոք կարթ չեր նետել։ Սուրհանդակներ չեյին սլանում այս ու այն կողմանմիթար ծնողներին տեղեկություն հասցնելու համար։ Ալաբամի հարթության այն փոքրիկ կտորը, վոր բացվում եր աչքերիս առաջ, զյուղական քնկոտ խաղաղությամբ եր շնչում։ «Մի գուցե, — մտածեցի յես, — այնտեղ գեռ գլխի չեն ընկեր չգիտեն, վոր չար գայլերը խաղաղ հարկի տակից փախցրել են անմեղ գառնուկին»։

— Տեր, ոգնիր գայլերին, — ասացի և իջա քարայր նախաճաշելու։


Յերբ մոտեցա քարայրին, տեսա Բիլլը կուչ ե յեկել և մեջքը քարե պատին ե նենել։ Նա ծանր շնչում եր։ Տղան կանգնած եր Բիլլի առաջ և սպասում եր կես հնդընկուզի չափ քարնետել նրա գլխին։

— Տաք կարտոֆիլ դցեց ոճիքիս մեջ, — բացատրեց Բիլլը, — և այն վոտքով ձխլեց ինձ վրա։ Յես նրա ականջին ոի ապտակ հասցրի։ Սեմ, ատրճանակ ունեմ։

Տղալից քարը խլեցի և մի կերպ հաշտեցրի նրանց։

— Դու գեռ քոնը կստանաս, — ասաց տղան Բիլլին։ Վոչ վոք գեռ չի համարձակվել ձեռք տալ կարմրամորթների առաջնորդին։ Զգուշացի՞ր։

Նախաճաշից հետո տղան գրպանից կաշվի մի կտոր



Կարմրամորթների առաջնորդը հեծել եր Բիլլին։

հանեց, վորի վրա թելեր եյին փաթաթած, և հետ տալով
այն դուրս գնաց քարալըից:

— Ել ինչ ե ուզում անել, — անհանգստացած ասաց
Բիլը: — Սեմ, չես կարծում արդյոք, վոր նա պատրաստ-
վում ե փախչել:

— Մի վախենար, — ասացի. — Նա ըստ յերեվույթին
մեծ տնասեր չե: Սակայն մեզ անհրաժեշտ ե այդ փրկա-
գնին վերաբերող մի ծրագիր կազմել: Հստ յերեվույթին
նրա անհայտացում, առանձին տագնապ չի առաջացրել:
Դուցե դեռ չգիտեն, թե նա կորել ե: Ծնողները կարող են
կարծել, թե վորեվե մորաքուլը Զենի կոմ հարեվանների
մոտ ե գիշերել: Համենայն դեպս, ցերեկը կբացվի նրա
անհայտացումը: Մենք յերեկոյան դեմ հայտարարություն
պիտի հասցնենք նրա հորը, վոր տղան մեզ մոտ ե գըտ-
նըվում, և վոր նրան վերադարձնելու համար մենք ցան-
կանում ենք յերկու հազար ստանալ:

Հենց այդ բոպելին մարտական մի աղաղակ լսեցինք.
Նման այն աղաղակին, վոր արձակել եր Դավիթը*), յերբ
նա գլխովին ջարդեց հայտնի ըմբշավարպետ Գոլիաֆին:
Այն իրը, վոր կարմրամորթների առաջնորդը հանեց իր
գրպանից, հենց պարսատիկն եր: Նա թափահարում եր այն
դիմի վերեվում:

Յես մի կողմ թեքվեցի և լսեցի ուժեղ հարվածի ձանը
ու Բիլի ծանր հառաջանքը, վոր նման եր ձիու հառաջանքի,
յերբ նրանից վերցնում եր թամբը: Հավկիթի չափ մի
քար կպել եր Բիլի ձախ ականջի հետեվը: Նա ձեռքերն
իրար զարկեց և ընկավ ուղղակի խարուցի մեջ՝ զբված
կաթսայի վրա, վորով աման լվանալու ջուր եր տաքանում:

Ստիպված եի դուրս քաշել նրան այնաեղից և մոտ
կես ժամը ջուր եյի ցանում նրա վրա:

*) Դավիդ - հրեական թագավոր, վորը համաձայն տստվա-
ծաշնչի ավանդության, պարսատիկից քարով սպանեց հոկա Գո-
լիաֆին:

Բիլը կամաց-կամաց ուչքի յեկավ, նստեց ու շոշա-
փեց իր ձախ ականջի հետեվը:

— Սեմ, — ասաց նա. — գիտե՞ս, ով ե բիբլիալի մեջ իմ
սիրելի հերոսը:

— Հանգստացիր, — ասացի. — իսկույն կառողջանաս:

— Հերովդես թագավորը*), — շարունակեց նա: Սեմ,
դու չես հեռանա: Ինձ մենակ չես թողնի:

Յես բռնեցի տղային ու թափահարեցի: Այնքան թա-
փահարեցի, մինչև վոր նրա պեպենները թրթուացին ինչ-
պես սիսերը սկյուտեղի վրա:

— Յեթե դու քեզ կարդին չես պահի, — ասացի,
անմիջապես տուն կտանեմ: Մարդավարի կպահես քեզ, թե
վոչ:

— Չե վոր յես խաղում ելի, — ասաց տղան նեղա-
ցած: — Յես խփել չելի ուզում Գագանորսին: Իսկ ինչու
առաջ նա ինձ խփեց: Լսիր, Ոձի Աչք, յես ինձ լավ կպա-
հեմ: Միայն թե ինձ տուն մի ուղարկի և թուզ տուր ինձ,
վոր հետախույզ խաղամ:

— Զգիտեմ այդ ինչ խաղ ե, — պատասխանեցի յես:
Այդ միստեր Բիլի հետ միհասին կվորոշեք: Այսոր նա քո
խաղընկերը կլինի: Յես գործով մի տեղ պիտի զնամ: Դե,
այժմ բարեհաճիր անմիջապես մոտենալ նրան, ներողություն
ինդըն և հաշտվել նրա հետ: Ապա թե վոչ, անմիջապես
մարշ դեպի տուն:

Ստիպեցի նրան և Բիլին իրար ձեռք սեղմել: Այ-
նուհետև Բիլին մի կողմ քաշեցի և ասացի, վոր յես գը-
նում եմ Պոպլար-կոֆ — փոքրիկ գյուղը, — մեր քարայրից
յերեք մղոն հեռավորության վրա և այնտեղ կտեղեկանամ,

*) Հերովդես թագավորը — Պաղեստինի կառավարիչ: Ինչ-
պես ասում ե աստվածաշնչի ավանդությունը, լսելով, վոր Յե-
րուսաղեմում ծնվել «հրեական թագավորը» (Քրիստոս), նա հրա-
մայեց մի գիշերգա մեջ վոչնչացնել քաղաքի բոլոր նորածին
տղա զավակներին:

թե Սեմմիտում ինչպես են վերաբերվել տղան փախցնելուն։ Յենթադրում եյի նույնպես, վոր նպատակահարմար կլիներ նախորոք մի նամակ ուղարկել ծեր Դորսետին, փրկագին պահանջելով նրանից և նշելով, թե ինչ ձեվով պիտի վճարի այս։

— Սեմ, քեզ հայտնի յե, — ասաց Բիլը, — վոր յես հետ չեմ մացել քեզնից և աչք չեմ թարթել վոչ լերկ-րաշարժի ժամանակ, վոչ կրակում, վոչ ջրում։ Պոկերը*), դիմամիտի պայթյունները, վոստիկանների խուզարկությունները, գնացքների թալանումը և ցիկլոնները չեն կարողացել բաժանել մեղ իրարից։ Յես չգիտեյի, թե ի՞նչ բան ե վախը մինչև անիծված այն որը, ի՞րբ փախցրինք այս սատանի ճուտին, այդ լերկոտանի հրթիռին, սատանան քրքրի նրան։ Նա իմ մեջ խուճապ առաջացրեց։ Սեմ, դու ինձ լերկար ժամանակով նրա հետ մենակ չես թողնի։

— Յերեկոյան գեմ կվերադառնամ, — ասացի։ — Զվարճացրու նրան մի կերպ և զբաղեցրու մինչև վերադառնա։ Դե, իսկ այժմ, յեկ մի նամակ շարադրենք ծեր Դորսետին։

Մատիտ և թուղթ ճարեցինք և սկսեցինք շարադրել նամակը։ Կարմրամորթների առաջնորդը վերմակի մեջ փաթաթված քայլում եր քարայրի առաջ պաշտպանելով նրա մուտքը։ Բիլն արտասուքն աչքերին աղաչում եր ինձ իջեցնել տղայի փրկագնի գումարը մինչև մեկ ու կես հազար դոլար յերկու հազարի փոխարեն։

— Յես փորձ չեմ անում, — ասում եր նա, — նվազեցնել հայրական սիրո և նվիրվածության բարձր զգացմունքը սակայն չե վոր մենք մարդկանց հետ դործ ունենք։ Մարդը միմիայն մարդ ե և վոչ ավելին։ Բայց դե չի կարելի պահանջել մարդուց, վոր նա յերկու հազար դոլար դեն ձգի քառասուն ֆունտ կշիռ ունեցող պեպենոտ վայրի կատվի համար։ Այդ հակառակ ե մարդու բնությանը։

*) Պոկեր — մոլեգին թղթախաղ։

Մեկ ու կես հազարի սկսկ ելի կարելի յե անել։ Տարբերությունը յես իմ հաշվիս կվերցնեմ։

Յես ստիպված լեղա զիշել, վոր հանգստացնեմ Բիլին, և մենք կազմեցինք հետեւյալ նամակը։

(Եսկվայր*) Երենեզեր Պորսետին

Մենք թագցրել ենք ձեր վորդում մի տեղ, հեռու Սեմմիտից։ Ամենալավ խուզարկուներն անդամ ձեղ չեն ոգնի։ Միակ և վերջնական պայմանը, վորով դուք կարող եք հետ ստանալ ձեր վորդուն, հետեւյալն եւ նրան ձեղ վերադարձնելու համար մենք պահանջում ենք հազար հինգ հարյուր դոլար խոշոր կտրոններով։ Դրամն այսոր կես գիշերին պիտի թողնվի նույն տեղում, վորտեղ մենք կգտնենք այս նամակի ձեր պատասխանը։ տեղի նկարագրությունը ներքեւ տրված եւ Յեթե դուք համաձայն եք մեր պայմանին, այսոր ութև անց կես ժամին ուղարկեցեք պատասխանը։ Յերբ կանցնեք Բուփ գետակը Պոպլար-կոփի ճանապարհին, այստեղ յերեք բարձր ծառ կտեսնեք, իրարից հարյուր յարգ**). հեռավորության վրա, հենց ցանկապատի մոտ, վորը շրջապատում ե վարելահողն աջ թեվի վրա։ Յերրորդ ծառի գիմաց, գետնին, ցանկապատի սյունի մոտ, ձեր կողմից ուղարկված մարդը փոքրիկ կարտոնատուփ կդառնի։

Նա պիտի դնի այդ տուփի մեջ ձեր պատասխանը և անմիջապես վերադառնա Սեմմիտ։

Յեթե դուք մտածեք վորեե ստորություն անել կամ չհամաձայնեք մեր պայմանին, այլևս դուք յերեք չեք տեսնի ձեր վորդուն։

*) Եսկվայր — Ամերիկայում և Անգլիայում հողատերերի և կավածատերերի տիտղոս։

**) Յարգ — Անգլիայում և Հյուս։ Ամերիկայում ընդունված չափ ե, վորը հավասար ե 3 փոտնաչափի։

Իսկ յեթե վճարեք զբամբ, ինչպես ցույց եւ տված,
յերեք ժամից հետո ձեր վորդին կվերագարձիլի ձեզ
առողջ և անվնաս:

Այս պայմանը վերջնական ե, և յեթե դուք չհա-
մաձայնեք այդ պայմանին, վոչ մի տեղեկություն մեզ-
նից այլիս չեք ստանա:

Գլխից ձեռք վերցրած յերկու մարդ»

Դորսետի հասցեն գրեցի և նամակը գրանս դրի:
Յերբ յես արդեն պատրաստվում եյի մեկնել, տղան մո-
տենում ե ինձ և ասում.

— Լսիր, Ոձի աչք, դու ասացիր, վոր ինձ կարելի յե
հետախույզ խաղալ մինչև դու վերադառնաս:

— Խաղա, ինարկե, — ասում եմ: Միստեր Բիլն ել
կխաղա քեզ հետեւ Վորն ե այդ խաղը:

— Յես հետախույզ եմ — ասում ե կարմըամորթների
առաջնորդը, — և յես պիտի նախազգուշացնեմ նորաբնակ-
ներին, վոր հնդկացիները պատրաստվում են հարձակում
գործել նրանց վրա: Յես ձանձրացել եմ ինքս հնդկացի
լինելոց: Ուզում եմ հետախույզ լինել:

— Հրաշալի յե, — ասացի, — ըստ յերեվույթին դա ան-
մեզ խաղ ե: Յես կարծում եմ միստեր Բիլը կոգնի քեզ
այդ արյունաբրու վայրենիների քիթը տրորել:

— Իսկ յես ինչ պիտի անեմ, — հարցնում ե Բիլը ու
կասկածու նայում տղային:

— Դու ձի յես, — ասում ե հետախույզը: Չորեքթաթ
կանգնիր: Յես քեզ հեծած կդնամ նորաբնակների ճամ-
բարը: Զի վոր չունենամ, ինչ հեծնեմ:

— Հարկավոր ե առայժմ զբաղեցնել նրան, — ասում եմ
Բիլն: Մի վիճիր հետը:

Բիլը կանգնում ե շորեքթաթ:

Հանկարծ նրա աչքերում բռնկում ե մի արտահայտու-



Սկսեցինք շաբադել նամակը:

թյուն, վոր ունենում ե ճագարը, յերբ նրա վրա յե ընկ-
նում թակարդը:

— Հեռու յե գտնվում այդ նորաքնակների գումակը, —
հարցնում ե նա:

— Ինսսուն մղոն, — ասում ե հետախույզը: — Դու
ստիպված կինես ձիգ թափել, վոր ժամանակին հասնես:
Դե, հոպ, գնա:

Հետախույզը թռչում ե Բիլի վրա ու նրա կողքերն
ե խրում իր կրունկները:

Հանուն բոլոր սրբությունների, — ասում ե Բիլը, —
վորքան կարելի յե շուտ վերադարձիր, Սեմ Ալս, իզուր
մենք փրկագինը հազար հինգհարյուր նշանակեցինք: Հա-
զար պիտի ուղեցինք: Լսում ես, կղաղաքես քացի տալ ինձ:
Ապա թե վոչ վեր եմ կենալու ու մի լավ ծեծ կտամ քեզ:

Յես հասա Պողլար-կոֆ և պտտեցի այնտեղ փոստի
գրասենյակի և խանութի մոտերը, խոսակցության բռնվե-
լով հասարակության հետ, վոր գալիս եր այնտեղ իր գոր-
ծերով:

Մի մորուքավոր մարդ հայտնեց ինձ, վոր Սեմմիտը,
ինչպես լսել ե, վրդովված ե ծեր Երեսեզեր Դորսետի
վորդու անհայտացման առթիվ: Յերեվի տղան մոլորվել
ե վորեւ տեղ, կամ փախցրել են նրան: Ավել վոչինչ հար-
կավոր չեր իմանալ ինձ:

Մի քիչ ծխախոտ գնեցի, տեղեկացա, իբր թե պա-
տահական կերպով, բակլայի գների մասին, նամակը կա-
մացուկ արկղը զցեցի ու հեռացա: Փոստի կառավարիչն
ասաց, վոր մի ժամից հետո փոստի սայլակը կանցնի
ե իր հետ կտանի Սեմմիտի փոստը:

Յերբ վերադարձա մեր քարայրը, վոչ Բիլը, վոչ տղան
չեյին յերեվում այնտեղ: Հետազոտեցի քարայրի շրջա-
կայքը, սիրտ արի, մի յերկու անգամ ձայն տվեցի, բայց
վոչ մի պատասխան չտացա:

Ծխամորճա կպցը, քարի վրա նստեցի և սպասում
եյի գեղքերին:

| Մի կես ժամ անցած, թփերի մեջ շիշխոց լսվեց, և
կաղալով, քարայրի մոտ մաքուր հարթի վրա դուրս յե-
կավ Բիլը: Նրա հետեւից յերեվաց աղան: Նա քայլում եր
հետախույզի զգույշ և գանդաղ քայլվածքով: Դեմքի վրա
լայն տարածված ժպիտն եր խաղում: Բիլը կանգ առավ,
գլխարկը հանեց ու կարմիր թաշկինակով մաքրեց իր գեմքը:
Տղան ութ քայլ հեռավորության վրա թագնվեց նրա հե-
տեից:

— Սեմ, — ասաց Բիլը, — դու ինձ դավաճան կհամա-
րես, բայց յես ավել դիմանալ չկարողացա: Յես չափահաս
մարդ եմ, տղամարդու հակումներով և ինքնապաշտպանու-
թյան սովորությունով, բայց լինում են գեպքեր, յերբ
ամեն ինչ խորտակվում ե: Տղան գնաց: Յես նրան տուն
ուղարկեցի: Վիժեց: Հին ժամանակները նահատակներ եյին
լինում, վոր գերադասում եյին մահանալ խարույկի վրա,
քան հրաժարվել վորեւ հատուկ կոմբինացիայից, վորը
պիտի հաջողեցներ իրենց գործը: Վոչ մեկը նրանցից չե
տեսել այն գերբնական տանջանքները, վոր ստիպված եմ
յեղել տանել յես: Յես աշխատում եի հավատարիմ մնալ
մեր պայմանին, բայց ամեն ինչ իր սահմանն ունի...

— Ի՞նչ ե յեղել, Բիլ, — հարցրի յես:
Նա ինձ հեծած անցակ ինսսուն միլ, ուղիղ մինչև
գումակը և մի մատնաշափ անգամ չուզեց զիջել: Իսկ
հետո, յերբ նորաքնակները փրկված եյին, ինձ վարսակ
տվեցին: Վարսակի տեղ ավաղ — զզվելի բան եր: Այսուհետեւ
մի ամբողջ ժամ յես պիտի բացարեյի նրան, թե ինչու
ջուրը թաց ե, իսկ խոտը կանաչ, և ուր ե գնում նողը,
յերբ նրա մեջ ծակ ես գոյացնում: Յես քեզ ասում եմ,
Սեմ, վոր մարդը միայն մարդ ե: Ոձիքից բռնեցի նրան
ու սարից ցած զլորեցի: Ամբողջ ճանապարհը նա խթա-
ու սարից ցած զլորեցի:

Նում եր: Յերկու վոտքերս մինչև ծնկները կապտած են: Յերկու թե յերեք անգամ ձեռքս կծեց: Բայց, փառք աստրծո, գնաց—տուն գնաց: Յես ցույց տվի նրան Սեմմիտ տանող ճանապարհը և այնպես տվի ծոծրակին, վոր մի-անդամից ութ վոտնաչափ առաջ անցավ դեպի Սեմմիտ: Ավտոս, իհարկե, վոր մենք փրկադնից զրկվեցինք: Բայց ինչ պիտի անելի: Ելի մի կես ժամ, և ինձ ստիպված կլինելին գժանոց տանել:

Բիլը հառաչում ու հեվում եր, բայց նրա վարդագույն գեմքի վրա խաղաղության և հանգստության արտահայտություն եր իջել:

— Բիլ, — հարցը ի ես, — քո ընտանիքում սրտի պայմանից վոչ վոք չե՞ մահացել:

— Վոչ, — ասաց Բիլը, — մեր ընտանիքում վոչ մի ժառանգական բան չի յեղել, բացի մալարիալից և դժբախտ դեպքերից:

— Այդ գեղքում կարող ես հետ նայել և տեսնել, թէ ինչ ե քո մեջքի հետեւ:

Բիլը հետ նայեց, տեսավ տղային, գունատվեց և գետնին ծունը իջնելով, սկսեց, հայտնի չե թե ինչի համար, խոտ պոկել և տաշեղ հավաքել: Մի ամբողջ ժամ անհանգստացնում եր ինձ նրա մտավոր ընդունակությունների վիճակը: Յես բացատրեցի նրան, վոր յեթե ծեր Դորսետը համաձայնի մեր պայմանին, մինչև կես գիշերին ամեն ինչ կվերջանա և մենք կազատվենք տղայից: Բիլը մի կերպ հավաքեց իր ուժերը: Նրան հաջողվեց նույնիսկ խողճուկ ժպիտի նմանող մի արտահայտություն տալ իր գեմքին, և խոստացավ տղային, յերբ մի փոքր ուշք դա, ուսւաճապոնական պատերազմ խաղալ նրա հետ:

Փրկագին ստանալու իմ ծրագիրը, վոր ապահովում եր մեզ ամեն տեսակ չար դիտավորությունից, արժանի յեր պրաֆեսիոնալ մանկագողներին: Այն ծառը, վորի տակ

ալիս դրվեր պատասխանը և այնուհետև ել դրամը, գըտնը վում եր ցանկապատի մոտ, իսկ շուրջը հարթ, մաքուր դաշտեր ելին տարածվում: Յեթե մի խումբ վոստիկաններ հետեվելին մարդուն, վոր պիտի գար պատասխանն ստանալու համար, հեռվից կնկատելին, ինչպես նա մոտենում ե, ինչպես գնում ե դաշտով կամ ճանապարհով: Ինչպես չե: Ութ և կեսին չես արդեն նստած եյի նշանակված ծառի վրա, թագնված ճուղերի մեջ, ինչպես մի ծառի դողոց, և սպասում եյի Դորսետի կողմից ուղարկված մարդուն:

Ճիշտ նշանակված ժամին հեծանիվով մոտենում ե մի պատանի. ցանկապատի սունի մոտ գտնում ե կարգոնե տուփը, մեջը մի գրություն և դնում և հետ վազում Սեմմիտ:

Ելի մի ժամ սպասեցի և վորոշեցի, վոր վոչ մի խարդախություն չկա, ծառից ցած սողացի, վերցը գրությունը, ցանկապատի մոտով ծածուկ անցա դեպի անտառը: Կես ժամից հետո մեր քարարում ելի գտնվում: Բաց արի գրությունն ու լապտերի լույսի տակ կարգացի այն Բիլին: Դրությունը գրչով խզբած վատ ձեռագիր եր, հետեւալ բովանդակությամբ:

«Գլխից ձեռք վերցրած յերկու մարդուն

Զենտլմեններ, ստացա սույն թվի ձեր նամակը, վոր վերաբերում ե իմ վորդուս վերադարձնելու համար ձեր կողմից պահանջած փրկագնի հարցին: Յես գտնում եմ, վոր ձեր պահանջը վորոշ չափով չափազանցրած ե, ըստ վորում հակառաջարկ եմ անում ձեզ, վորը, նախորոք կարծում եմ, ձեր կողմից ընդունված կլինի: Վերադարձրեք ինձ Զոննիին և վճարեցեք ինքներդ ինձ կանխիկ դրամով 250 դոլար: Այս պայմանով յես համաձայն եմ ձեզնից ընդունել նրան: Ամենից լավ ե գաք նրա հետ գիշերը,

վորովհետև հարեվանները կարծում են, թե նա մոռվել ե, և յես չեմ կարող պատասխանառվություն վերցնել ինձ վրա, թե ինչպես են նրանք իրենց պահելու այն մարդկանց հանդեպ, վորոնք հետ կրերեն վորդուս:

Կատարյալ հարգանքներով
Եբենեզեր Դորսես:

— ՄԵծ ծովահեններ և ֆլիբուստլերներ*). — բացահանչեցի յես: — Այսպիսի հանդգնություն...

Սակայն նայեցի Բիլին և տատանվեցի: Նրա դեմքն այնպիսի աղերսանք եր արտահայտում, վորից ավելի արտահայտիչը յես չեմ տեսել վոչ մի խոսող կամ անխոս կենդանու դեմքին:

— Սէմ, — ասաց նա: Ի՞նչ բան ե վերջի վերջո յերկու հարյուր հիսուն դոլլարը: Դրամ մենք ունենք: Մի գիշեր յեփս անց կացնեմ այս տղայի հետ և յես պատրաստ կլինեմ Բեդլամի**): համար: Յես գտնում եմ, վոր միստեր Դորսետը, բացի նրանից վոր ջենտլմեն ե, նա և շոալող ե: Այսպիսի համեստ գումար պահանջել: Միթե դու բաց ես թողնելու այսպիսի եժան դեպք, Սէմ:


— Ճիշտ ասեմքեղ, Բիլ, — ասացի, — այս փոքրիկ գառը իմ ջղերիս վրա ել ե ազդում: Տանենք նրան իրենց տուն, փրկագին վճարենք և ազատվենք:

Նույն գիշերը տղային տուն վերադարձինք: Մենք հավատացրինք նրան, թե հայրն արծաթե ծրատով հրացան և մոկասիններ***): Ե գնել նրա համար և վոր վաղը նրա հետ առջապորսի յենք գնալու: Այդ խոստումից հետո միայն հաջողվեց համոզել նրան, վոր մեզ հետ գնա:

*) Ֆլիբուստյերներ — XVII դարու ծովահեններ:

**) Բեդլամ — խելազուրկների տուն Լոնդոնում:

***) Մոկասիններ յեղջերվի կաշվից պատրաստած փափուկ կոշիկներ, վոր հագնում են Հյուսիսային Ամերիկայի հնդկացիները:



Տղան տղրուկի նման կպակ Բիլի վոտքերից:

Ժամը ուղիղ տասլերկուսն եր, յերբ Երենեզեր Պոլ-
սետի դուռը բաղիսեցինք:

Հենց այն մոմենտին, յերբ յես մեր առաջվա յեն-
թաղրության համաձայն տուփից մեկ ու կես հազար դոլ-
լար պիտի հանեյի, Բիլլը ծերուկի մեկնած ձեռքի մեջ
համարում եր յերկուհարյուր հիսուն դոլլար:

Յերբ տղան տեսավ, վոր մենք հեռանում ենք և
նրան թողնում ենք տանը, նա բարձրածայն, ինչպես մի
նավի շչակ լաց յեղավ և տղրուկի նման կպավ Բիլլի
վոտքից: Հայրը ստիպված եր խեժի սպեղանու նման մաս-
մաս պոկել նրան Բիլլի վոտքից:

— Վհրքան ժամանակ կկարողանաք պահել նրան,—
հարցրեց Բիլլը:

— Եհ, այժմ յես առաջվա պես ուժեղ չեմ, — պատաս-
խանեց ծեր Դորսետը: — Սակայն, կարծում եմ, տաս ըոսկե
կարող եմ ապահովել ձեզ:

— Այդքանը բավական ե, — ասաց Բիլլը: Տաս ըոսկե-
յում յես կկտրեմ Արևմուտքի նահանգների կենտրոնական
հարավալին և միջին մասերը և կանցնեմ Կանադալի սահ-
մանը:

Յեվ չնայած գիշերվա մթությանը, Բիլլի հաստու-
թյանը և իմ արագավազ վոտներին, Բիլլը Սեմմիտից մեկ
ու կես միլ տարածություն եր անցել արդեն, յերբ լես
հասա նրան:



Պատ: Խմբագիր՝ Հը. Քոչար
Տել. Խմբագիր՝ Ան. Գասպարյան
Սըբագրիչ՝ Վ. Ավագյան

Քլավէիտի լիազոր Ղ - 4723. Հրամ. 4529.

Պատվեր 203. Տիրամ 6000.

Թուղթ 62×74. Տպագր. 1^{3/4} մամ.

Մեկ մամ. 24480 նշան. Հեղինակ Օ. 96 մամ.

Հանձնված ե արտադրության 26 գետրվարի 1938

Ստորագրված ե սպագրության համար 25 մայիսի 1938

Պետհրատի 1 տպարան, Յերևան. Լենինի 65



ԳԻՆԸ 50 ԿՈՊ.

О. ГЕНРИ
ВОЖДЬ КРАСНОКОЖИХ
ГИЗ АРМ. ССР, ЕРЕВАН

«Ազգային գրադարան»



NL0376841

765